ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Լ. Կ.

1920-ական թվականները տասնամյակների ընթացքում զարգացում ապրած հայկական արդի մշակույթի և արվեստի ակունքն են: Երիտասարդ հանրապետության համար ծանր այդ տարիներին (եղեռնի թողած հետքերը, համաճարակը, սովը), երբ ժողովրդի հոգում դեռ թարմ էր 1915թ. ողբերգության հիշողությունը, հետաքրքիր երևույթ էր հոգևոր բարձր վերելքը, որ արձանագրվեց Հայաստանում մշակույթի նոր օջախների ստեղծմամբ, մշակույթի և գիտության զարգացմամբ:

1920-ական թվականներին Հայաստանում ծավալված ճարտարապետական-շինարարական աշխատանքներին մեծ նպաստ է բերել Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ-ը)[1]: ՀՕԿ-ը «նպատակ ուներ ոչ միայն նյութական բնույթի օգնություն մատուցել, այլև բարոյական, որը ոչ պակաս կարևոր է մեր ապագա բարգավաճման տեսակետից»[2]: Կոմիտեի հիմնադիր ժողովում (1921 թ., սեպտեմբեր) նշվել են նրա գործունեության հիմնական ուղղությունները՝ կարիքավոր բնակչության օգնություն, ներգաղթի կազմակերպման և դրա հետ կապված՝ Հայաստանում շինարարական աշխատանքներ ծավալելու հարցերը: Այն խնդիր էր դրել «օժանդակել կուլտուրական հանրային հիմնարկություններին, ժողտներին, գրադարաններին, թատրոններին, Հայաստանի ժողովրդական համալսարանին, գիտական ինստիտուտին, ազգային թանգարանին, կինոյին, նաև հրատարակչական գործի զարգացմանը»[3]:

ՀՕԿ-ը ստեղծվեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո: Հիմնադիր անդամներից էին՝ Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Նար-Դոսը, Ռոմանոս Մելիքյանը և պետական ու հասարակական այլ գործիչներ:

ՀՕԿ-ի աշխատանքներին մեծ աջակցություն էին ցուցաբերում սփյուռքը և Հայաստանի մտավորականությունը: Պայմանագրեր էին կնքվում արվեստի ներկայացուցիչների հետ՝ ստեղծելու գործեր, որոնք կներկայացնեին հանրապետության կյանքի տարբեր ասպարեզները: Հայտնի է երաժշտագետ Կուշնարյովին ուղղված նամակը՝ հայկական օպերային գրականություն ստեղծելու մասին: Պահպանվել են նյութեր կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանին, Անուշավան Տեր-Ղևոնդյանին, Գրիգոր Եղիազարյանին՝ երաժշտական գործեր ստեղծելու առաջարկների վերաբերյալ: Ալեքսանդր Շիրվանզադեին առաջարկություն է արվել գրել իր տպավորությունները Խորհրդային Միության (Հայաստանի) մասին, գրողներ Վահան Թոթովենցին, Ազատ Վշտունուն՝ օպերային լիբրետոներ: Հայկինոյին օժանդակություն է ցույց տրվել կինո-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 178, ց. 1, գ. 23:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ժապավեններ ձեռք բերել, ֆիլմ ստեղծել՝ հատկապես նպատակ ունենալով արտասահմանին ծանոթացնել Խորհրդային Հայաստանի նվաճումներին: Արտասահման էին գործուղվում մտավորականներ՝ հայկական օջախներում հանդիպումներ ունենալու նպատակով:

ՀՕԿ-ը լիազորագրեր էր տալիս արվեստի գործիչներին: Պահպանվել են Ալ. Թամանյանին և Մ. Սարյանին տրված լիազորագիրը:

ՀՕԿ-ը ստեղծել էր իր մասնաճյուղերը այն բոլոր երկրներում, որտեղ կային հայկական մշակութային օջախներ: Միայն ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում ստեղծվել էին ՀՕԿ-ի բազմաթիվ բաժանմունքներ:

Շինարարական կարիքների համար ՀՕԿ-ը հիմնել էր բանկ: Սփյուռքահայության բազմաթիվ նվիրատվությունների շնորհիվ Երևանում և Հայաստանի տարբեր շրջաններում այդ տարիներին հիմնադրվեցին նոր ավաններ, հայրենադարձների համար կառուցվեցին բնակելի և հասարակական շենքեր: Հատկապես ուշադրություն էր դարձվում ուսումնական հաստատությունների, հիվանդանոցների, ծերանոցների և որբանոցների կառուցմանը: Պահպանվել են բազմաթիվ հետաքրքիր նյութեր, որոնք վկայում են այս հարցում տարբեր երկրների բարեգործական միությունների ցուցաբերած աջակցության մասին:

Հավանական է, որ նվիրատվությունների օժանդակությամբ, 1925 թ. Ալ. Թամանյանի նախագծով, Արմավիրի շրջանում որբերի համար կառուցվեց Ս. Լուկաշինի անունով ավան: Ավանի կառուցման համար Թամանյանն օգտագործեց այն ժամանակ տարածում գտած «քաղաք-այգու» նախագիծը[4]: Ավանի բացման օրը տեղի ունեցավ հանդիսավոր արարողություն: Ներկա էին հեղինակը՝ Թամանյանը, կառավարության ղեկավար Ս. Լուկաշինը և կառավարության անդամները: Այս ավանի համար Թամանյանը մշակեց նաև բնակելի տների տիպեր, որոնք իրենց ճարտարապետական կառուցվածքով մոտ էին ժողովրդական տներին:

Հայաստանի 1920-1930-ական թվականների շինարարական աշխատանքներում մեծ էր սփյուռքի մասնակցությունը: Շինարարությանն աջակցելու նպատակով, ՀՕԿ-ի վարչության հասցեով արվում էին բազմաթիվ նվիրատվություններ: Հիշատակենք դրանցից մի քանիսը: «Կեսարիա» հայրենակցական միությունը Երևանի համալսարանի բաժանմունքներից մեկում ձեռնարկել էր կառուցել շերամաբուծական վարժարան: Մեծ հետաքրքրություն կար նաև գորգագործությունը զարգացնելու, գորգի գործարաններ հիմնադրելու գործում[5]: Ուշագրավ է ՀՕԿ-ի՝ Ստեփանավանում մեղվաբուծական դպրոց կառուցելու և Ավստրիայում մասնագետներ պատրաստելու ձեռնարկումը: Լենինականի (Գյումրի) 1926 թ. երկրաշարժի առիթով ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը բոլոր գաղութներին կոչ արեց հանգանակություններ կատարել: Փարիզում նրա նախաձեռնությամբ կազմակերպվեց կենտրոնական հանգանակիչ հանձնախումբ, որը պետք է աջակցեր այդ նպատակի իրագործմանը: Նրա գործունեության շնորհիվ գոյացել էր բավական մեծ գումար՝ 100000 ռ.[6]:

---

[4] *Архитектура Советской Армении. 1920-ые годы, Е., 1980, с. 11.*

[5] ՀԱԱ, ֆ. 178, g. 11, գ. 170:

[6] Նույն տեղում:

Նման ձեռնարկումները բազմաթիվ էին: Հատկապես մեծ էր սփյուռքի ներդրումը նոր ավաններ հիմնադրելու գործում, որտեղ պետք է բնակվեին հայրենիք ներգաղթածները: Այսպես ստեղծվեցին Նոր Արաբկիրը, Նոր Տիգրանակերտը, Նոր Կեսարիան, Նոր Խարբերդը, Նոր Բութանիան, Նոր Եվդոկիան (Վաղարշապատի մոտ), Շենգավիթը, Նուբարաշենը, Նոր Սեբաստիան, Նոր Մալաթիան և այլ ավաններ: Ինչպես նշում էին ներգաղթի կազմակերպիչները,«այս վայրերից կարելի էր դիտել ամբողջ Արարատյան դաշտը և Ալագյազը»[7]:

Նոր ավանները հիմնադրվեցին տարբեր տարիներին և բավական արագ սկսեցին կառուցապատվել: 1934 թ. տեղի ունեցավ Կեսարիա և Նոր Տիգրանակերտ ավանների հանդիսավոր բացումը: Տիգրանակերտի վերաշինական և հայրենակցական միության ձեռնարկած՝ դպրոցի շենքի շինարարությունը իրականացվելու էր «Չելսիի Տիգրանակերտի կրթասի- բաց ընկերության նախագծով՝ գծած ճարտարագետ Գ. Գեղամյանի կողմից»[8]: Ըստ նախագծի, Տիգրանակերտը պետք է ունենար հրապարակ (100x40 մ^2), որի վրա բացվելու էին երկու կողմով 20 մ լայնությամբ փողոցներ: Այստեղ նախատեսված էր կառուցել հասարակական շենքեր՝ դպրոց, մանկապարտեզ, հիվանդանոց, ակումբ և այլն: Ավանին հատկացված տարածքը Դալմայի այգիներին կից մի բարձունքի վրա էր, որի շուրջը կային ազատ հողամասեր՝ հետագայում օգտագործելու համար:

Ակտիվ աշխատանքներ էին տարվում ավաններ կառուցելու, հատակագծեր կազմելու և այդ ավաններում բնակելի տներ, դպրոցներ, արդյունաբերական շենքեր կառուցելու նպատակով: 1935 թ. հանձնվեցին Նոր Կեսարիայի, Նոր Քղիի, Նոր Տիգրանակերտի, Նոր Եվդոկիայի գլխավոր հատակագծերը: Նուբար փաշայի ձեռնարկությամբ հիմնադրվեց Նուբարաշեն ավանը, որի կառուցման առաջին քայլերից էր Երևան-Նուբարաշեն խճուղու շինարարությունը: 1932 թ. Ավանում արդեն ապրում էր 120 ընտանիք:

Հայաստանի ժողկոմխորհի աջակցությամբ ձեռնարկվել էր Նուբարաշենում կառուցել անհատական բնակելի տներ, դպրոց, մանկամսուր, թատրոն (որի համար «Սարյան ֆոնդից» տրամադրվել էր 2000 անգլիական ֆունտ ստեռլինգ, դպրոցի համար «Մինաս Չերազի ֆոնդից» հատկացվել էր 702 անգլիական ֆունտ ստեռլինգ): Հետաքրքիր մտահղացումներ կային՝ կապված Նուբարաշեն ավանի կառուցապատման հետ՝ նպատակ ունենալով այնտեղ ստեղծել աշխույժ հասարակական կյանք: Մտադրություն կար Նուբարաշենում հիմնադրել «Եգիպտահայ տուն», նաև՝ «Արգենտինահայ տուն»: Անգլիայի հայ գաղութը նույնպես հարց էր բարձրացրել «Անգլահայ տուն» կառուցելու համար: Ցավոք, այդ մտադրությունները մնացին անկատար: Հիմնադրված ավաններում 1920-ական թվականների վերջերից սկսեցին տարվել լայնածավալ շինարարական աշխատանքներ: Այսպես՝ Նոր Բութանիայում 1928-ից արդեն բնակվում էր 1200 ընտանիք, իսկ Նոր Մալաթիայում 1926-ին բնակելի

[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում, ց. 4, գ. 3: Նախագիծը չի պահպանվել:

տների կառուցմանը (թվով՝ 50 ընտանիք) զուգընթաց հիմնադրվել էր հյուսվածքեղենի գործարան:

Հետաքրքիր է, որ հայրենադարձները ձգտում էին ընտրել այնպիսի բնակավայրեր որոնց անվանումը հիշեցնում էր Թուրքիայում իրենց թողած հայրենիքը: Այսպես, օրինակ՝ «Նոր Թամարզան դիրքի տեսակետից նմանություն պետք է ունենար հին Թամարզային, որը գտնվում էր Արգեոսի արևելքում, իսկ Նոր Թամարզան գտնվում էր Արագածի արեվելքում», նշված էր նրանց հայրենակցական միության որոշման մեջ[9]:

Ավանների կառուցման համար Հայաստանի կառավարության հետ ՀՕԿ-ը կնքում էր պայմանագրեր, որոնցով պարտավորվում էր ապահովել շինանյութեր՝ շենքերի կառուցման համար: Հայաստանի ճարտարապետները ևս գործուն մասնակցություն էին ցուցաբերում այս հարցում: Ուշագրավ է Թամանյանի 1925 թ. նամակը ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը, որտեղ նա գործնական խորհուրդներ է տալիս շինանյութերի օգտագործման վերաբերյալ. «Ի պատասխան Ձեր գրության (սեպ. 2) Սեբաստիայի վերաշինության միության հարցումի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը՝ Հայաստանում փայտեղենի թանկության պատճառով խորհուրդ չէինք տալ փայտի տների կառուցումը: Նույնը վերաբերում է նաև այրած աղյուսին: Հում աղյուսից տներ կառուցանել չարժե, քանի որ շինարարության համար մենք ունենք շատ հարմար «տուֆ» կոչված քարը: Այդ քարից շինած բնակարաններից յուրաքանչյուր սենյակը իր բոլոր պարագաներով կարժենա 1000-1500ռ.»[10]:

Ավաններից շատերը հետագայում միացվեցին Երևանին: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ Ա. Թամանյանը կազմեց Նոր Արաբկիրի և Նուբարաշենի հատակագծերը: Ճարտարապետ Մ. Կապուտիկյանը, որը մեծ մասնակցություն ուներ ավանների նախագծման և կառուցապատման գործում, ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն ուղղած՝ 1935 թ. օգոստոսի 14-ի նամակում նշում է. «Նոր ավանները, բացի Նուբարաշենից և Նոր Խարբերդից, ունեն այն առանձնահատկությունները, որ շատ մոտ են Երևանին և քիչ ժամանակից ձուլվելով մայրաքաղաքի հետ՝ դառնում են վերջինիս արվարձանները՝ կազմելով նրա ծայրամասերը: Այս հանգամանքն էլ ավելի ուշադրություն է պահանջում դեպի նոր ավաններում կատարվող շինարարական աշխատանքները»: Կապուտիկյանը առաջարկում է առաջին հերթին վերանայել այդ հատակագծերը, ստուգել դրանցով կառուցված շենքերի տեղադրումը, սրբագրել, ուղղել և վերամշակել: Ճարտարապետը բարձրացնում է նաև մի շարք գործնական հարցեր՝ կառուցապատումը բարելավելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, առաջարկում է ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը կից ստեղծել հատուկ նախագծային խումբ՝ ավանների հատակագծերը մշակելու համար: Բացի այդ, ամբողջ ավանների հատակագծումը կազմել ոչ թե իրարից անկախ, այլ ընդգրկել մի ընդհանուր «հատակագծային ցանցի մեջ»[11]:

Մ. Կապուտիկյանի նամակը հետաքրքիր է այն իմաստով, որ պատկերացում է տալիս այն տարիներին ավանների կառուցման վերաբերյալ,

---

[9] Նույն տեղում, ց. 1, գ. 797:
[10] Նույն տեղում, ց. 11, գ. 335:
[11] Նույն տեղում, ց. 1, գ. 820:

և թե ինչպիսի նոր հարցեր էին առաջ գալիս դրանց կառուցապատման ընթացքում:

Արտասահմանի հայերը ՀՕԿ-ի միջոցով նվիրատվություններ էին փոխանցում նաև առանձին շենքեր կառուցելու նպատակով: ՀՕԿ-ի տարբեր քաղաքների մասնաճյուղերը նաև ցանկություն էին հայտնում Երևանում իրենց համար տներ կառուցել: Մեկ տուն ցանկացավ հիմնադրել «Ֆրանսահայ տուն» անունով Ֆրանսիայի ՀՕԿ-ի վարչությունը: Մի տուն ևս, «Փարիզահայ» անունով, հանձն էր առել կառուցել Փարիզի տիկնանց միությունը, որը մտադրվել էր իր միջոցներով Երևանում Սունդուկյան փողոցում (այժմ՝ Մաշտոցի պողոտա) տուն կառուցել նոր ամուսնացող որբերի համար: Ամերիկայի ՀՕԿ-ի վարչությունը մտադիր էր կառուցել «Ամերիկահայ տուն», որը բազմաթիվ նպատակների համար պետք է ունենար հյուրանոց, ակումբ, ընթերցարան-գրադարան հայ մըտավորականների, հասարակական-գրական գործիչների համար: 1927 թ. ՀՕԿ-ի վարչության կողմից որոշում ընդունվեց կառուցել այդ տունը և ճարտարապետներ Կ. Հալաբյանին և Մ. Մազմանյանին առաջարկվեց կազմել նախագիծ: Ակումբի շենքը նախատեսված էր կառուցել Աբովյան փողոցում: Ըստ վարչության պահանջների, այն պետք է լիներ երեք հարկանի (վերելակով) և ունենար 440 հոգու համար ճաշարան, սրճարան, լուսանկարչատուն: Շենքը կառուցվելու էր տուֆից (օգտագործելով Հայաստանի գույնզգույն մարմարը): Հյուրանոցի շենքն ունենալու էր անկյունային դիրք Աբովյան և Իսահակյան փողոցների խաչմերուկում:

Հյուրանոցի շենքի ներքին ձևավորման համար պայմանագիր էր կնքված նկարիչ Միքայել Արուտչյանի և քանդակագործ Արա Սարգսյանի հետ: Պայմանագրում նշված էր, որ՝ 1) նրանք «պարտավորվում են իրենց վրա վերցնել ՀՕԿ-ի կողմից Երևանում կառուցվող հյուրանոցի ներքին գեղարվեստական ձևավորման գործի ղեկավարությունը, 2) այդ գործի համար ընկերներ Արուտչյանը և Սարգսյանը կազմում են նկարչական և քանդակագործական բրիգադներ և ղեկավարելու են այդ բրիգադների աշխատանքները, 3) պարտավորվում են կատարել ներքին ձևավորման վերաբերյալ բոլոր աշխատանքների մոդելները, էսքիզները, ընդհանրապես ողջ հյուրանոցի ձևավորումը աթոռներից, սենյակների ընդհանուր ձևավորումից մինչև գեղարվեստական ստեղծագործական աշխատանքների էսքիզները և այլն»[12]:

ՀՕԿ-ի վարչության հանձնաժողովի նիստին հրավիրված ինժեներներ Ա. Գասպարյանը, Ա. Մելիք-Հայկազյանը, ճարտարապետներ Ն. Բանը, Ն. Բունիաթյանը և Հ. Քաջազնունին դրական պատասխան են տալիս Մ. Մազմանյանի և Կ. Հալաբյանի նախագծին՝ այն համարելով «նպատակահարմար հյուրանոցի և ակումբի շենքերի փոխհարաբերության տեսակետից, սենյակների դասավորության, օդի առատության, լույսի (ոչ մի մութ անկյուն չկա ողջ նախագծի մեջ), առողջապահական տեսակետներից: Նախագիծը նպատակահարմար էր նաև կառուցողական տեխնիկայի տեսակետից, որը հնարավորություն է տալիս իրագործելու ամենակարճ ժամանակամիջոցում»: Նշված էր նաև պարզ կոնստրուկցիաների կիրառման նպատակահարմարությունը, ճշգրիտ գտնված ճարտարապե-

[12] Նույն տեղում, գ. 197, թ. 76:

տական ոճը, որը «միանգամայն ժամանակակից է իր պարզությամբ»: Այսուհանդերձ, ծանոթանալու նպատակով Նյու-Յորք ուղարկված՝ Հալաբյանի և Մազմանյանի նախագիծը հավանության չարժանացավ, և այնտեղ նորը պատվիրվեց (հեղինակն անհայտ է)[13]: Հյուրանոցի և ակումբի շենքերի կառուցումն այդպես էլ չիրականացվեց: Հետագայում այդ տեղում կառուցվեց Արմէներգոյի վարչական շենքը: Ամերիկայից ուղարկված նախագծով իրականացվեց ՀՕԿ-ի բնակելի տունը, որը գտնվում էր իրեն հատկացված տարածքի խորքում՝ Աբովյան փողոցում, որտեղ ինչպես նախատեսված էր, պետք է ապրեին մտավորականները: Այս շենքի դիրքը տարածքի խորքում պայմանավորված էր նրանով, որ Աբովյան փողոցում պետք է կառուցվեր ակումբը, որը տաք անցումով կապված կլիներ բնակելի շենքի հետ: Այս տանը ապրել են գրողներ Վահան Միրաքյանը և Դերենիկ Դեմիրճյանը, որի բնակարանը ներկայումս դարձել է Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանը:

«Մարի Նուբար» ակնաբուժական կլինիկայի ստեղծման մասին է պատմում ՀՕԿ-ի ներկայացուցիչ Բերումյանի նամակը (25.VI.1925)՝ ուղղած Հայաստանի կառավարությանը. «Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ ժողովիս նախագահ վսեմ. Նուպար Փաշա, որոշած ըլլալով Հայաստանի մեջ հիմնել բարեգործական հաստատություն մը հավերժացնելու համար իր տիկնոջ՝ Մարի Նուպարի հիշատակը, վճռած է ՀԲԸ միության կենտրոնական ժողովի հետ համաձայնությամբ 400.000 ֆրանկի գումար մը հատկացնելու համար Շենգավիթի որբանոցը՝ պայմանով, որ այդ որբանոցը մշտնջենավոր կերպով կրե Մարի Նուպարի անունը, և պայմանով, որ հայկական կառավարությունը հանձնառու ըլլա միշտ հաստատ պահել այդ որբանոցը և կամ ապագայում մի ուրիշ բարեգործական հաստատություն մը շինե (հիվանդանոց, ծերանոց, ապաստարան և այլն): Եթե վսեմ. Նուպար Փաշայի այս առաջարկը ընդունվի կառավարությանդ կողմե, միությունս պիտի կրնա անմիջապես Շենգավիթի որբանոցի կառուցման համար իր տրամադրած 5000 ոսկին հատկացնել Հայաստանի մեջ գտնվող հայ գաղթականները Հայաստան փոխադրելու գործին: Կըխնդրենք, մեծարգո պարոն ներկայացուցիչ, հայտնել անհապաղ հայկական կառավարության կողմեն ընդունված ըլլալու լուրը»[14]:

Շենգավիթի որբանոցի կառուցման պայմանագիրը ստորագրել էին Պողոս Նուբար փաշան և Հայաստանի կառավարության կողմից՝ Արամայիս Երզնկյանը: Նուբար փաշայի նվիրատվությամբ նրա տիկնոջ մահից հետո Երևանում կառուցվեց Մարի Նուբարի անվան ակնաբուժական կլինիկան: Նախագիծը բերվեց արտասահմանից: Շենքը գտնվում է Աբովյան փողոցում: Այդ հիվանդանոցի շենքը, ըստ Երևանի գլխավոր հատակագծի, Ա. Թամանյանը տեղադրեց նոր ստեղծված ուսանողական թաղամասում, որտեղ կենտրոնացնում էին բոլոր հիվանդանոցային շենքերը՝ պետհամալսարանի բժշկական մասնաճյուղին մոտ լինելու նպատակով: Նույն նկատառումով այստեղ կառուցվեց մանկաբարձական-գինեկոլոգիական հիվանդանոց՝ մեծահարուստ ամերիկուհի Դարուհի Հակոբյանի նվիրատվությամբ: Այս հիվանդանոցի ստեղծման վերաբերյալ պահպան-

[13] Նույն տեղում, գ. 144:
[14] Նույն տեղում, ց. 11, գ. 131:

վել է հետևյալ փաստաթուղթը. «Առժողկոմատի, Հողժողկոմատի և բարեգործականի ներկայացուցիչների կողմից հանձն է առնվում ֆոնդի կուտակված հասույթներից 7110 անգլիական ոսկի տրամադրել Երևանի մեջ համալսարանին կից մի մայրության տուն շինելու և այնտեղ մանկաբարձական կուրսեր հաստատելու Դարուհի Հակոբյանի անունով»[15]: Այդ հիվանդանոցը ևս կառուցվեց Թամանյանի նախագծով, նույնպես հիվանդանոցային շենքերի համալիրում՝ ուսանողական թաղամասում:

Հետաքրքրություն են ներկայացնում Մելգոնյան ֆոնդին առնչվող նամակները, որոնցից տեղեկանում ենք Հայաստանի ազգային գրադարանի շենքի ստեղծման պատմությանը[16]: Այդ շենքի կառուցումը մտահոգել է դեռևս Հայաստանի Առաջին հանրապետության կառավարությանը: Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչը՝ Ավետիս Ահարոնյանը և Նուբար փաշան, գտնվելով Փարիզում, նամակ են ստանում մեծահարուստ Մելգոնյան եղբայրներից այն մասին, որ նրանք ժառանգներ չունեն և կցանկանային իրենց ամբողջ հարստությունը թողնել հայ ժողովրդին: Արձագանքելով նրանց նամակին՝ Ահարոնյանը Հայաստանի արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Խատիսյանին հայտնում է Գրիգոր և Կարապետ Մելգոնյանների՝ 300.000 անգլիական ոսկու նվիրատվության մասին. «Երկու եղբայր Մելքոնյանները նվիրում են իրենց ազգին 600.000 ոսկի և արժանի են մեր կառավարության պաշտոնական շնորհակալանքին այս բարձր հայրենասիրական նվիրատվության համար»[17]: Հայաստանի կառավարությունը եղբայր Մելգոնյաններին՝ մեկը հունահպատակ, մյուսը՝ տաճկահպատակ, 1919 թ. հայտարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ: Սակայն Գրիգոր Մելգոնյանը վախճանվում է՝ չհասցնելով կտակը փոխանցել Հայաստան: Իսկ Կարապետ Մելգոնյանը որոշում է մնալ հելլենահպատակ[18]:

Ըստ նրա կազմած նոր կտակի՝ տարեկան 3000 եգիպտական ոսկի էր հատկացվում Երևանի համալսարանին, «իսկ եկամուտը բավականացնելու դեպքում» պետք է կառուցվեր արվեստի և արհեստի դպրոց, որտեղ կամփոփվեր մի տպարան, և Եվրոպայի զանազան համալսարաններում կպահվեին հայ ուսանողներ: Իրականում Հայաստանին բաժին է ընկել ժառանգության 1/10 մասը: Մելգոնյան ֆոնդի գումարներից 6000 անգլիական ոսկի է տրամադրվել գրադարան կառուցելու համար: Հայտնի են նաև արտասահմանից ստացված այլ նվիրատվություններ: Այսպես, օրինակ՝ Նուբար փաշան նամակ է ստանում Կահիրեի մի բնակչից, որը, ցանկանալով անհայտ մնալ գումար էր նախատեսել Երևանում հանրային գրադարան կառուցելու համար: Ենթադրվում էր շենքն անվանել «Պետհամալսարանի մատենադարանի և հայագիտական ուսումնասիրության հաստատություն»[19]:

Գրադարանի շենքը (մակերեսը պետք է լիներ 640 քմ, ընդհանուր ծավալը՝ 7680 խմ) պիտի ունենար երեք հարկ: Առաջին հարկում պետք է

[15] Նույն տեղում, ց. 1, գ. 447:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում, ց. 4, գ. 447:

լինեին Մատենադարանի գլխավոր գրադարանը (5-6 հարկանի, երկաթյա և ապակյա հատակներով), ընթերցասրահը, աշխատասենյակները: Երկրորդ հարկում լինելու էին հայագիտական մատենադարանը, հետազոտական ինստիտուտի գրասենյակը, 200-տեղանոց մեծ դահլիճը: Երրորդ հարկում՝ 10 մեծ սենյակներ հայագիտական հետազոտությունների համար: Նախագծելով գրադարանի շենքը՝ Ա. Թամանյանը, անկասկած, հաշվի էր առել այս պահանջները: Բայց և այնպես, քաջ գիտակցելով Հայաստանի պայմանները՝ ճարտարապետը շենքի նախագիծը մոտեցրեց գրադարանային շենքի յուրահատկություններին: Այն նույնպես տեղ գտավ Երևանի ուսանողական թաղամասում, Տերյան փողոցի կողմից:

ՀՕԿ-ի բազմաթիվ մտադրություններ մնացին անկատար, անշուշտ, օբյեկտիվ պատճառներով: Խորհրդային երկրում սրվել էր քաղաքական իրադրությունը: Անհատի պաշտամունքը անհետևանք չանցավ՝ ծանր անդրադառնալով հանրապետությունների, իհարկե, նաև Հայաստանի քաղաքական և հասարակական կյանքին: Կասկածի տակ էին դրվում օտարերկրյա բոլոր կազմակերպություններն ու անհատները, որոնք ինչ-ինչ գործունեությամբ կապված էին Հայաստանի հետ: Այդ ճակատագրից չխուսափեց նաև ՀՕԿ-ը: 1930-ական թվականների կեսերից Հայաստա- նի օգնության կոմիտեի գործունեությունը Հայաստանում զգալիորեն նվազեց, իսկ այնուհետև խորհրդային կառավարության և Կենտրոնական կոմիտեի հատուկ որոշումներով ընդհանրապես արգելվեց:

О СТРОИТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИТЕТА ПОМОЩИ АРМЯНАМ В 1920-1930-ЫЕ ГГ.

ДОЛУХАНЯН Л. К.

Резюме

Деятельность ХОК-а (Комитета помощи армянам) в 1920-30-годы была довольно разносторонней. Она охватывала все области культурной, хозяйственной жизни. Комитет имел свои организации во всех странах, где проживали армяне.

Стремление иметь связь с Родиной, участвовать в восстановлении разрушенных городов и сел Армении было настолько велико, что побуждало армян, живущих за рубежом, оказывать финансовую помощь для строительства жилых домов, школ, больниц, заводов, фабрик. Особенно активны были землячества, члены которых, желая вернуться на Родину, мечтали иметь здесь свои поселения (Нор-Арабкир, Малатия, Себастия, Тигранакерт и т. д.).

Большую помощь оказывал руководитель благотворительной организации “Помощь армянам за рубежом” Нубар-паша, на средства которого строился Нубарашен. Зажиточные армяне за рубежом оставляли Советской Армении огромные наследства, которые вкладывались в строительство тех или иных учреждений, больниц Республики (гос. публ. библиотека, гинеколог. больница, главная клиника им. Мари Нубар и т. д.). Неоценима их деятельность в период советизации Армении.